

ՄԵՆԹՈՐՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համատեղ իրականացվող «Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագրի շրջանակներում Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում հայտարարում է մենթորների ներգրավման մրցույթ:

2020թ. Կոտայքի և Գեղարքունիքի մարզերն անցում են կատարել համընդհանուր ներառական կրթության, որի շրջանակներում վերոնշյալ մարզերի բոլոր դպրոցներն իրականացնելու են ներառական կրթություն: Այս գործընթացի արդյունավետ կազմակերպման կարևորագույն նախապայման է մանկավարժների կարողությունների զարգացումը:

ՀՄԿ-ի կողմից իրականացվող «Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագրի նպատակն է մենթորական շարունակական աջակցության միջոցով նպաստել հանրակրթական դպրոցների մանկավարժների կարողությունների զարգացմանը՝ նպաստելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների լիարժեք ներառմանն ու կրթության արդյունավետ կազմակերպմանը:

Մրցույթի արդյունքում յուրաքանչյուր մարզում ընտրվելու են 10-ական մանկավարժներ, որոնք կմասնակցեն ՀՄԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին և, կիրառելով մենթորական աջակցության մոդուլն ու գործիքակազմը, Հարգելի հանրակրթական դպրոցների իրենց կցված ուսուցիչների համար կիրականացնեն շարունակական աջակցության ծրագիր (վերապատրաստում և մենթորական աջակցություն):

Ծրագրին դիմելու գլխավոր նախապայմաններից է՝

- ունենալ բարձրագույն մանկավարժական կրթություն
- լինել Գեղարքունիքի կամ Կոտայքի մարզի բնակիչ
- լինել գործող ուսուցիչ
- ունենալ առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ
- ունենալ հաղորդակցման և թիմային աշխատանք իրականացնելու կարողություններ
- մարզերում վերապատրաստում իրականացնելու հասանելիություն եւ ճկունություն,
- տիրապետել համակարգչային ծրագրերի (Word, Excel, Powerpoint եւ այլն)
- տիրապետել առնվազն մեկ օտար լեզվի
- ունենալ կազմակերպչական, արագ կողմնորոշվելու հմտություն եւ նախաձեռնողականություն

Բոլոր հետաքրքրված անձինք կարող են մինչև սույն թվականի **դեկտեմբերի 30-ը** իրենց աշխատանքային կենսագրությունն (CV) ու հետաքրքրվածության նամակն (պարտադիր) ուղարկել info.hmKentron@gmail.com էլ. հասցեով:

